29.03.2024թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 11

Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների
հանրային խորհրդի 2024թ. մարտի 29-ի նիստի

ք. Երևան	սկիզբ՝ 29 մարտի 2024թ.,	ժ. 14:35
	ավարտ՝	ժ. 16:15

Մասնակցում էին՝ Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհրդի) 11 անդամներից 9-ը:

Բացակայում էին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչ Ա. Քթոյանը և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոռեկտոր Հ. Ծպնեցյանը:

ՀՀ Ֆինանսների նախարարության Մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ Գ. Պետրոսյանի փոխարեն մասնակցում էր ՀՀ ֆինանսների նախարարության իրական հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի պետ Ն. Տիտիզյանը, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մ. Սարգսյանի փոխարեն՝ իրավաբան Ա. Լևոնյանը:

Հրավիրված էին՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատի) նախագահի տեղակալ Գ. Անանյանը, Վիճակագրության պետական խորհրդի անդամ Լ. Պետրոսյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և նույն բաժնի ավագ մասնագետ Լ. Մելիքյանը:

Նիստի արձանագրությունը **վարում էր** Հանրային խորհրդի քարտուղար, Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Գ. Նշանյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. «2023 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագծի քննարկում

2. «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագծի քննարկում

3. Այլ հարցեր:

Նիստը վարում էր Հանրային խորհրդի նախագահ Ա. Անանյանը:

Բացման խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

Քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

Հանրային խորհրդի 9 անդամների կողմ քվեարկության արդյունքում այն **հաստատվեց**:

Մինչ Օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը քննարկվեց և որոշվեց հետագայում նիստերի անցկացման ընթացքում քննարկվելիք հարցերը նախապես ուղարկել գերատեսչությունների ընդհանուր պաշտոնական էլեկտրոնային փոստին, այնուհետև նաև Հանրային խորհրդի անդամի աշխատանքային էլեկտրոնային փոստին:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ՝ համաձայն օրակարգի, Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը համառոտ ներկայացրեց «2023 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագիծը:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ Հանրային խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն **որոշեց** հավանություն տալ «2023 թվականի վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագծին:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ՝ համաձայն օրակարգի, Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը համառոտ ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագիծը:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ՝ Հանրային խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն **որոշեց** հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների վիճակագրական ծրագրի կատարման հաշվետվության» նախագծին:

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ՝ «Այլ հարցերի» շրջանակում.

Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը պատասխանեց Հանրային խորհրդի անդամների հարցերին: Քննարկման արդյունքում որոշվեց աշխատանքային քննարկումներ կազմակերպել ավելի հաճախ:

Նիստի եզրափակիչ խոսքով հանդես եկավ Հանրային խորհրդի նախագահ պարոն Ա. Անանյանը:

29.03.2024թ.

Հանրային խորհրդի նախագահ՝ Ա. Անանյան